

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

891.99

Մ-35



391.39

Մ-35

պ.

ՄԱՐՈ ՄԱՐԿԱՐՅԱՆ

6 NOV 2011

Մ Տ Ե Ր Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՍ.ՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Z U S M E S Z R U S
8 6 1 9 4 0

15.06.2013

42662



2932
40

МАРО МАРКАРЯН
Д Р У Ж Б А
Гис Арм ССР, Ереван, 1940 г.

ԺԻՎԱԳՂՈՂ ՀՈՒՅՋԵՐ

ՅԵՐԳ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Աշխարհների ամեն ծայրից, ուր հասնում ե շողն
արևի,
Կարոտներ ե բերում իր հետ վոսկեծածան ջողն արևի.
Մարդկանց հոգու հուրն ե տալիս աշխարհի մեծ աշ-
ուաջնորդին,
Վորի գվարթ յերկիրն ե լոկ հայրենական հոգն արևի.

Նրա պայծառ հայացքի դեմ՝ կյանքիդ որը դար
կդառնա,
Մի աննշան փոքրիկ հակինթ մարդարիտի շար կդառ-
նա.
Թե թեկ կապես փայտի վրա՝ յերգես զովքը մեր աշ-
խարհի, —
Փայտը քնար քաղցրահնչյուն, թեքն ել՝ վոսկի լար
կդառնա:

Նրա պայծառ հայացքի դեմ կանաչիկ են բարերն ան-
գամ.
Զմռան դաժան համբույրներից ստուույց հազած սա-
րերն անգամ.

Քար ու քամի, յերկինք ու ծով նոր ձև առան
մարդու ձեռքին,
Վորի անցած մեն մի սրվան չարժեն անցած դարերն
անգամ :

Վողջ աշխարհն է յերգում հիմա հաղթ ու հզոր ձեռ-
քը նրա,
Վոմանք պայծառ սիրուն ու հողին, վոմանք մաքի
բերքը նրա .
Մենք էլ հալենք վոսկի բառեր մեր սրտերի վառ
հնոցում,
Յեղ արեվի սրտին գրենք հավերժացող յերգը նրա :

ՀՈՒՅՁԻ ՓՆՋԵՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Թե չլինեն ծառ ու ծաղիկ՝
Մայր բնության դարդը փեմ .
Չարտասանված խոսքի խաղից
Յես քեզ համար փունջ կհչյուսեմ :

Թե չլինեն ծաղիկ ու խոսք,
Շչունջները ջերմ ու լուսեղ .
Նվազներից հեռվում հոսող
Յես քեզ համար փունջ կհչյուսեմ :

Թե չլինեն խոսք ու շշուկ,
Յերգ ու նվազ թե չլսվեն,
Յերազներից լուռ խուսափուկ
Յես քեզ համար փունջ կհչյուսեմ :

Յեթե չեղալ ջինջ յերազն իսկ,
Մուսնց վորի հողին է սև,
Յես արևի յերանդներից
Արփիաների փունջ կհչյուսեմ :

Փունջ կհչյուսեմ, փունջ կհչյուսեմ, —
Հողեն, ցողեն, արեչողեն,
Այս բոլորից անուշ հայր իմ
Կյանքդ յերգով կ'վողողեմ :

Վոչ մի հյուշե հուր չմնաց իմ հողում,
Վոչ մի փակված դուռ չմնաց իմ հողում,
Խառնալինթոր ճայների այս փնջերից
Յեվ վոչ մի բառ լուռ չմնաց իմ հողում:

Ել յերդ չկա իմ յերգասեր կրծքի տակ,
Վորքան վոր կար, քար ու դռնար, տվի քեզ,
Թուղթ իմ անբիծ, թուղթ իմ մաքուր, սպիտակ
Քո գրկումն ե սերն ու սիրտս հրակեց:

Վորպես լռիկ ու դադանապահ բարեկամ,
Պահել ես միշտ սրտիս խորքերն անհատակ
Բացիր այսոր աշխարհի դեմ սիրական,
Թուղթ իմ անբիծ, թուղթ իմ մաքուր, սպիտակ:

Անուշ բեռն այդ, վոր պահել ես գրկիդ մեջ,
Չան ու մարջան, հույներ ու սեր, վոսկերաւ
Մբտիս սերը, իմ հույզերը, եջ առ եջ
Իմ լավ յերկրի դավալներին յերգով տար:

Վորպես լռիկ ու դադանապահ բարեկամ,
Պահել ես միշտ սրտիս խորքերն անհատակ.
Բացիր այսոր աշխարհի դեմ սիրական,
Թուղթ իմ անբիծ, թուղթ իմ մաքուր, սպիտակ:

Դե, իհարկե, դու արև չես մարի,
Վոչ ել փոթորկված ծովեր կսանձես,
Բայց յերդ իմ, փոքրիկ, համեստ ու բարի
Շատ ծով ու արև թող քեզ նախանձեն:

Թե կպչեզ մարդկանց սրտի նուրբ լարին,
Հողու հեքի հեա կարենաս խաղալ.
Մի յերգի ժանյակ թողած աշխարհին,
Հայրերիդ ճամբով թե գնաս խաղաղ:

Թե մեր ծանրախոհ վեհ մատյանների
Իմաստուն բանին դուժարես մի տող,
Ո, այն ժամանակ յերդ իմ դեռ թերի
Թող քեզ նախանձի ամեն մի քերթնոյ:

Դե, իհարկե, դու արև չես մարի,
Վոչ ել փոթորկված ծովեր կսանձես,
Բայց յերդ իմ, փոքրիկ, համեստ ու բարի
Շատ ծով ու արև թող քեզ նախանձեն:

Ճոխ անտառում յես տերեւի՝
 Ի՞նչ տամ կյանքին լուսաշող,
 Վոչ դարուն եմ, վոչ արեւ,
 Գոնե լինեմ մի բուռ հող,
 Վոր իմ սրտից անմշակ՝
 Ծլի մի նուրբ մանուշակ:

Այս աշխարհին հրակեղ,
 Միշտ բերքառատ, միշտ բեղուն,
 Ի՞նչ նվիրեմ, ի՞նչ տամ յես.
 Լինեմ փոքրիկ մի մեղու,
 Գոնեմ փեթակ ու բլիշ՝
 Մեզք շինեմ գեթ մի բիշ:

Տերեներով վարորած
 Ծող ու շալլ անհաշիվ,
 Կոկոնների մեջ կորած՝
 Լինեմ ճկուն դալար չիվ
 Յեվ բախտավոր մի բալիկ
 Կտրե վորպես խաղալիք:

Թե թաղնվի անունն իմ
 Մոռացութեան մուժի տակ,
 Թողնեմ այս լավ աշխարհում
 Գեթ մի փոքրիկ հիշատակ.
 Յեվ իմ սրտից անմշակ՝
 Ծլի մի նուրբ մանուշակ:

Այս պարզ յերգը յես եմ հյուսել
 Հույզի թել-թել հույսեր բերող,
 Անհուն կարոտ ու սեր բերող,
 Սե սրտերին սուսեր բերող,
 Այս պարզ յերգը յես եմ հյուսել:

Իմ սիրասուն յերկրին լուսե
 Ցանկացել եմ մի խոսք ասել.
 Յերբ ասելու ժամն ե հասել
 Այս անպաճույճ յերգն եմ հյուսել
 Իմ սիրասուն յերկրին լուսե:

Հոգուս խորքում սաղարթախիտ
 Գարուններ կան ջինջ ու հստակ.
 Տերե-տերե, կաթիլ-կաթիլ,
 Յերգ եմ հյուսել այնտեղ նստած:

Դուրս եմ քաշել սրտիս միջից
 Ծաղիկներն իմ հույզով սնած,
 Բայց դեռ հոգուս մարդերում ջինջ
 Կոկոններ կան մուշ-մուշ քնած:

Հույզի թել-թել հույսեր բերող,
 Անհուն կարոտ ու սեր բերող,
 Սեվ սրտերին սուսեր բերող
 Այս պարզ յերգը յես եմ հյուսել:

ՔՈ ՅՈՒՆԱՐՓԻ ԼՈՒՅՍԵՐՈՒՄ

Այնքան ջերմ են, այնքան ջինջ են
Իմ հույզերը դեպի քեզ,
Հողուս առջև արեվն ի՞նչ է,—
Մի շքանակ հրակեզ:

Այնքան լախ է, այնքան խորն է
Սրտիս սերը դեպի քեզ,
Հողուս առջև ծովը վո՞րն է,—
Մի ավսե ջուր համր ու հեզ:

Յերգ ու տաղով սպրում եմ քո
Վազ ու վողկույզ վարսերում,—
Իմ սիրական հայրենի հող,
Ի՞նչ նվիրեմ քո սիրուն:

Թե թշնամու սովեր լինի
Քո յոթնարիկ լույսերում,
Իմ հայրենիք, մրգի սինի,
Կյանքս կտամ քո սիրուն:

Այնքան լախ է, այնքան խորն է,
Սրտիս սերը դեպի քեզ,
Հողուս առջև ծովը վո՞րն է
Մի ավսե ջուր համր ու հեզ:

Արև, քեզ այնքա՛ն, այնքա՛ն եմ սիրում,
Վորքան շողեր ես ավել աշխարհին:
Վորքան վայրկյաններ ունի քո սարին,
Արև, քեզ այնքա՛ն, այնքա՛ն եմ սիրում:

Վորքան թռչուն է անհող ճուղում,
Քո արձակ փոված վոսկի շողերում:
Վորքան ծիլեր կան անծիր հողերում,
Արև քեզ այնքան, այնքան եմ սիրում:

Վորքան սրտեր կան կարոտ քո հույզին,
Վորքան ծաղիկ է շողում քո լույսին,
Վորքան թիթեռ է դողում քո հույսին
Արև, քեզ այնքա՛ն, այնքա՛ն եմ սիրում:

Վորքան յերգ ունի կարկաչող առուն
Վորքան կաթիլներ ցող-ցող դալարուն,
Վորքան այդաբաց ու վորքան դարուն,
Արև, քեզ այնքան, այնքան եմ սիրում:

Հույզ թափիր վերից, լույս թափիր վերից,
Մեր ջինջ ծաղկաչառ դարուն աշխարհում:
Վարդ թափիր վերից, չառ թափիր վերից,
Արև, քեզ այնքան, այնքան եմ սիրում:

Նվիրված կոմյերիտիստիքյան բռնամարտին:

Արտիս մեջ ե ծաղիկ ծլել,

Քար ու քոլին ի՞նչ ասեմ յես.

Թիվ ե անել հողիս թռել,

Թեթև լորին ի՞նչ ասեմ յես.

Այս աշխարհում, հույզի դարում,

Ով չի ինձ պես յերջանիկ,

Նստեմ ինձ հետ՝ զրույց անեմ,

Ով չի ինձ պես յերջանիկ,

Ո՞վ չգիտի, վոր ջահելի

Սիրտը սիրո ծով կլինի.

Թե նրա աջ թեկին կանգնած

Զվարթ աղջիկն ով կլինի,

Յեվ արեվն իսկ թե վոր թափի

Կապույտ բոցով հուր ու հրդեհ,

Նրանց համար սառնակոհակ

Դարնան անուշ հով կլինի:

Յեկ իմ տղա, սեզ իմ տղա

Նվեր բերենք մեր աշխարհին,

Յես իմ սրտի ծաղիկ սերը,

Ինչ քո գվարթ յերգող յարին.

Յերգ ու տալով դիմավորենք

Չահելության խնդուն որը,

Թե թառ չեղավ նվազելու,

Չարկենք մեր ծով սրտի լարին:

Շատ են սիրել զեզ սիրեն

Ու դեռ վորքան կսիրեն.

Թարթիչներով թարմ ու թաց,

Ակնածանքով լուսածիր,

Մեր պարտեզում լուս ջնած՝

Սիրուն սիրեն արթնացիր:

Յեկավ ցողի մի համբույր,

Յեկավ հողի բույրը նազ

Թիթեռնիկը յեկավ լուս՝

Թեին թառած բիլ յերազ.

Տես փոել ե դաշտն իրեն

Հակինթները ցան ու ցիր,

Մուշ-մուշ ջնած իմ սիրեն՝

Դե արթնացիր-արթնացիր:

Յեկավ հովը նուրբ ու հեզ,

Յեկավ շողը արևի,

Թարթիչներդ բացիր տես,

Լուս ժպտա մեզ, բարևիր,

Ինչ մայիսի նազ աղջիկ,

Նրա ժպտն առաջին,

Չարդարելով ծառ ու ծիլ

Դե արթնացիր-արթնացիր:

Յերբ կտարածվի պայծառ ծիրանին,
Հողնած աշխարհի մայր ցամաքներում,
Յերբ կծիծաղի անդամ Իրանի
Թուխ սուրմա քաշած աղջկեք սիրուն,

Յերբ նուշ աչքերով չին մանկիկը մեկ
Կպատմի որվա խաղերի մասին,
Յեվ փոքրիկ ու չար հնդիկը հրկեղ
Կվաղի կարմիր փողկապը վզին, —

Յես վայելչության կապերը քանդած՝
Կփարվեմ նրանց վորպես հաժր խենթ.
Յեվ արցունք բերող բերկրանքի խանդով
Կպատմեմ նրանց հաղար ու մի դեպք:

Կաղաչեմ նրանց, վոր ինձ հավատան,
Թե ինչպես եմ յես ապրել այդ հույզով,
Թե ինչպես հաճախ, անդամ, յերազում,
Յեղեկ ենք մի տեղ, ապրել ենք մի տան
Կխնդրեմ նրանց, վոր ինձ հավատան:

Ու վողջ միասին թավ կանաչի մեջ
Անհող խնդությամբ կնստենք հացի.
Յեվ ծիծաղաչարթ խոսքերով անվերջ
Կլատախոսի ամերիկացին:

Լուռ խաղանուհին թարթիչները սեվ
Յողած աչքերի պայծառ գիշերում,
Կիկնոռի նախնյաց պատկերը լուսե
Պատմության գրքի մաշված փեշերում:

Յեվ այդ հնացած ծանր գրքի մեջ
Աչքերը ծովի կապույտով ներկած,
Խաժ գերմանուհին կկարդա մի եջ, —
Թե վոնց ապառնին դարձել ե ներկա:

Վողջույն բաղմանդամ իմ լավ ընտանիք,
Քեզ խոր հրաժեշտ փոթորկոտ յերեկ,
Վողջույն ձեզ բաղում յերեկներ գալիք,
Վոր պիտի բերեք մշտավառ ցերեկ:

Իմ արյունն ել կհանդարտի
 Վորպես ամուսն նվազ առու.
 Հաղթ քայլերդը ճամբորդ սրտիս,
 Ել չեմ լսի պաղ կրծքի տակ.
 Լուռ ցամաքող առվի ափին,
 Կծիծաղի մահվան հեռուն,
 Կխաղաղվի ծով հույզերիս,
 Արեվարտդճ հոտանքը տաք:

Ինչ կմնա առվի ափին,—
 Իմ աշխարհին ինչ կտամ յես.
 Մի քանի տող կամ քառատող,
 Գուցե անմիտ կամ պարզ ու խոր.
 Կամ լոկ յիրազ, դուցե վոչինչ,
 Կանհետանամ սավերի պես,
 Ո՛ր, թող ների աշխարհը ջինջ
 Զավակներին ապաշնորհ...

Յեվ ինձ նման դեռ չատերին,
 Վոր յեկել են ու պիտի դան.
 Խնդության զեխ աղմուկի մեջ,
 Յեվ յերգերում հզորազոր.
 Զիրկնվող ձայնի նման
 Թե չթողնեն փոշի անդամ,
 Թող աշխարհը ներող լինի—
 Զավակներին ապաշնորհ:

Թող ծավալվի տիեզերքում
 Լույսն արնաների իմ դրոշի.
 Անհող լինի մարդն ամենուր,—
 Յերջանիկության ծիծաղն աչքին,
 Յեվ յերջանիկ այդ աշխարհում
 Թեկուզ մեկը թող չհիշի,
 Վոր յեղել է սիրակարոտ
 Յերգով ապրող ինչ վոր աղջիկ...

Խնջույք լինի տիեզերքում,—
 Վարդ ու դվարդ նստեն ճաշի.
 Սեղան բացվի անծայրածիր՝
 Ամենայն ազգ շուրջը բուրբ,
 Թող մենք կորչենք անհեռ ու լուռ,
 Դառնանք ավազ, դառնանք փոշի,
 Միշտ կների աշխարհը մեծ
 Զավակներին ապաշնորհ:

Յեվ ինձ նման դեռ չատերին,
 Վոր յեկել են ու պիտի դան.
 Խնդության զեխ աղմուկի մեջ
 Թե չհիշվեն ել վոչ մի որ,
 Զիրկնվող ձայնի նման
 Թե չթողնենք փոշի անդամ,
 Թող աշխարհը ներող լինի
 Զավակներին ապաշնորհ:

2932
40



Կանաչ բախշա բաղ անեմ յես,
Հազար թուփ ու թաղ անեմ յես,
Քրտինք թափեմ կաթիլ-կաթիլ
Աչնանն անուշ քաղ անեմ յես.
Պտուղ ցրեմ վասկեհատիկ՝
Բնության հետ խաղ անեմ յես:
Մանուկներ դան մրդեր տանեն,
Մրդաթաթախ յերգեր տանեն,
Մանուկներ դան խաժ աչքերով
Սրտիս ծովում ժպտտ ցանեն.
Մանուկներ դան սիրտս հանեն
Ու հյանքս վողջ տանեն-տանեն...

Առուն յերգի քնեմ յես,
Մանկան ձեռքին քնեմ յես,
Իմ խոր բուժված աշխարհի
Փակված վերքին քնեմ յես:

Առուն յերգի քնեմ յես,
Հովի հեղքին քնեմ յես,
Այդի շինեմ սար ու քար,
Թիկնած բերքին քնեմ յես:

Կարդացեք իմ տողերը
 և ժպտացեք ինձ,
 Ձեր շրթերի վարդաներկ
 ժապավեններով,
 Ձեր հայացքում թաղնված
 խինդը բացեք ինձ
 Մանկան սրտով լալս ու խոր
 և հավերժ ներող:

Կարդացեք իմ տողերը
 մարդերում նստած
 Ձե՞ վոր անգամ կանաչն է
 լավ հույզի դերի,
 Ձե՞ վոր ձեզ ել ճանաչ է
 թե առուն հստակ
 վոնց է կրկնում կարկաչով
 հանգն իմ յերգերի:

Կարդացեք իմ տողերը
 ծիծաղող հույլ բերեք ինձ,
 Ջինջ անեղձ ու անարատ
 պարզ ու դեղանի,
 Կարդացեք իմ տողերը
 ու սրտի լույս բերեք ինձ
 Բերեք թափեք իմ հողում
 դրասեղանին:

Յես ձեր խորունկ խոհերից
 ձեր կարոտներից
 Պարզ ու անպաճույճ
 յերգեր կհյուսեմ,
 Կկարդանք մենք միասին
 կժպտանք նորից
 Ու կը յերգենք որերի
 բերկրանքը վսեմ:

Կարդացեք իմ տողերը
 և ժպտացեք ինձ:

Կզան, ելի կզան,
Որեր հահինի՞ ու լալ.
Հեքյաթ վոսկեճկան՝
Կաթնաղբյուրներ զուլալ:

Ու կծնվեն խարայաչ
Հաղար անուշ բալա, ✓
Լուսազանդուր ու խած
Իմ աչխարհում հայալ:

Կերթա զոր ու գիշեր
Յերգը հորդ ու վարար,
Քնար, սրինգ ու շեր
Նվագներն տարալ:

Յեվ թախիժ թի խոնավ
Տարածվելով զիչ-զիչ,
Խնդուլթյունից հողնած
Հողուդ վրա կիջնի:

Սարի կանաչ լանջով
Փորքրիկ աղջիկ անցավ,
Անմեղուլթյամբ տանջող
Անհող, անվիշտ, անցավ:

Քամին շոյեց նրան,
Սիրուն խոսքեր ասաց.—
Ասաց հատիկ նուսն,
Ասաց մորի հասած:

Ասաց՝—կանգնիր աղջիկ,
Ծաղկե զգեստ բերեմ,
Յեվ աչքերում քո ջինջ
Սիրո թախիժ սերեմ:

Սարի մարմանդ լանջով
Փորքրիկ աղջիկ անցավ
Անմեղուլթյամբ տանջող,
Անհող, անվիշտ, անցավ:

ԻՆՏԻՄ ՅԵՐԳԵՐ

ՄԱՆՈՒՇԱԿԻ ՄԵՂԵԳԻՆ

Վորպես հուզը բույրով ապրող թիթեռի
Թռչում ես դու ծաղկից-ծաղիկ շարունակ,
Վոր վարդն անգամ լուկ ակնթարթ քեզ գերի,
Յես ի՞նչ անեմ թույլ ու անզոր մանուշակ:

Յես չեմ կարող շուշանների նման սեզ
Քաշել դիրկս ճառագայթներն արևի,
Յես մի ծաղիկ աչքից անտես, թույլ ու հեղ
Թաղնվում եմ սովերում իմ տերևի:

Բայց դարնան մեջ անհունորեն լուսավես,
Ծաղկանց միջև շալլ ու շող ավելի,
Անկրկնելի իմ հմայքը ունեմ յես՝
Լուռ թաղնված սովերում իմ տերևի:

Ձեզ իմ դարնան թարմ ու նրբին
Ծաղկիկներն եմ նվիրում,
Դուք սառնասիրտ աշնան շրթին
Ափսոսում եք և լուռ:

Բայց յերբ ձմռան բուքը փչի,
Իմ դարունն ել կմարի.
Թող իմ վերջին ծաղիկը՝ ձեր
Յուրտ աշունը զարգարի:

Կներե՞ արդյո՞ք Ձեր հոգին հպարտ,
Վոր յես մի աղջիկ, անհմայք ու պարզ,
Ուղարկեմ Ձեզ դեռ չբացված մի վարդ,
Յեվ Ձեզ մոտ բացի թերթիկները թաց:

Վոր յես մի աղջիկ այսքան հասարակ,
Բայց հույզերս չերմ, այսքան խորն ու բարդ,
Փաթաթեմ վարդի թերթիկներում բարակ,
Կներե՞՞ արդյո՞ք Ձեր հոգին հպարտ:

Յեվ սիրոս պահած թերթիկի միջև,
Ուղարկեմ Ձեզ դեռ չբացված մի վարդ,
Վոր սիրոս ել իր հետ բացի Ձեր առջև
Կներե՞՞ արդյո՞ք Ձեր հոգին հպարտ:

Իբրև նրբանագ վողջույն ու բարև
Ուղարկում եմ ձեզ համիկ ու շուշան.
Յեվ ուզում եմ միշտ ծաղիկներ բերել,
Վորպես ծաղկալատ հույզերի նշան:

Վարդը զեղուհու հպարտ նազանքով
Վոր խենթացրել է աշխարհը համայն.
Ձեր պարզ ու վճիռ հայացքի ներքո
Կշառագունի իմ սրտի նման:

Խորհուն սիրենը, միշտ համեստ ու հեզ,
Կպատմի իմ լուռ խոհերի մասին.
Իսկ մանուշակը հողմահարի պես
Կզողա անգամ, վոր վոչինչ չասի:

Շուշանը անհոգ կրացի ձեր դեմ
Թերթիկն իմ հողու ձյունի պես ձերմակ.
Իսկ թե ինչ կասեն իրավ չզիտեմ
Համիկի դմբուխս կոկոնները փակ:

Բայց վորպես անխոս վողջույն ու բարև,
Ուղարկում եմ ձեզ համիկ ու շուշան.
Յեվ ուզում եմ միշտ ծաղիկներ բերել
Վորպես ծաղկալատ հույզերի նշան:



Յես ուզում եմ՝ Ձեր կոկ սեղանի մոտ
Ծաղիկներ լինեն անխնամ թափած,
Վորպես բազմերանդ հույզերն իմ չփոթ,
Վորպես խոհերիս վարագույրը բաց:

Սորհուն սիրենը թարթիչները մուրթ
Կիսակի տխուր համր ու հեզանազ
Վորպես կապուտաչ նուրբ իրիկնամուտ
Վորպես առտնի անավարտ յերազ:

Լուռ կթառամեն ծաղիկներն իմ ջինջ,
Ճերմակ ախաջիան անխոս, անհատաչ,
Վորպես սարսափից գունաթափ աղջիկ
Կտարածվի Ձեր քայլերի առաջ:

Յես ուզում եմ՝ Ձեր կոկ սեղանի մոտ
Ծաղիկներ լինեն անխնամ թափած՝
Վորպես բազմերանդ հույզերն իմ չփոթ,
Վորպես խոհերիս վարագույրը բաց:



Կուզեյի ձեր նուրբ ծաղկամանի մեջ
Մեխակը փերթ-փերթ կոկոններ բացի,
Վորպես իմ հոգում հույզը լուսապերճ,
Անդրանիկ շողը իմ լուսարացին:

Կուզեյի թերթվող թղթի փոխարեն,
Մանուշակը ձեր ձեռքը համբուրեր.
Յեվ համիկն այնքան համեստ ու խոհեմ,
Միայն ձեր հոգնած ձեռքերից բուրբեր:

Յեվ ձեր Փարֆորե ծաղկամանի մեջ
Մեխակն իր ձեղքվող կոկոնը բացի.
Վորպես առտնի մառախուղներում
Հաճույքից շիկնող հորիզոնն անձիր:

Թող մոլոր մտքեր չպարուրեն ձեզ,
Յեզ ձեր խոհերի ջինջ հորիզոնում,
Չնկարվեմ յես վորպես մթնատես
Յեզ լույս ու խավար չխառնեմ իզուր:

Թող չար խորհուրդներ ձեզ չհամակեն
Իմ այս հանդուգն տողերի համար,
Իմ սրտի թանձր քողերի համար,
Վոր բացել եմ լուռ ձեր հայացքի դեմ:

Յես ուզում եմ ձեզ քառյակներ գրել,
Վորպես սրտահույզ յերգերի գինի:
Յեզ միշտ թարմ ու թաց ճաղիկ ուղարկելի,
Վոր ձեր սենյակում միշտ դարուն լինի:

Յեզ բոլոր-բոլոր հույզերն այն սմեն,
Ինչ վոր ձեր հողին յերջանիկ կանի:
Յեզ չուշաններն իմ հազարաչքանի
Ձեր հողում ցող-ցող ժպիտներ քամեն:

Իայց մոլոր մտքեր չպարուրեն ձեզ
Յեզ ձեր խոհերի անտես կտավին,
Չնկարվեմ յես վորպես մթնատես,—
Յես մութ յերագներ չունեմ տակավին:

Յեզ հեղձանք կա, և դբլանք կա,
Քո հայացքի հատակում:
Պղտոր ջուր կա, ջինջ աղբյուր կա,
Հույզերիդ հորդ առվակում:

Այսպիսա կա, կեսոր տոթ կա,
Քո հայացքի հատակում:
Սեզ քարեր կան, դժհարներ կան,
Հույզերիդ հորդ առվակում:

1.

Ծաղիկներն իմ նվիրած,
 Հենց վոր յես գուրս եմ դալիս,
 Ուրիշներին եք սալիս,
 Ծաղիկներն իմ նվիրած,
 Ծիծաղում եք ինձ վրա,
 Քամահրանքով կամ լուում,
 Ծաղիկներն իմ նվիրած,
 Ուրիշին եք նվիրում:

2.

Գիտեմ՝ Ձեզ եմ պարտական
 Յերգելու համար,
 Վոր գրում եմ անհամար,
 Գիտեմ՝ Ձեզ եմ պարտական.
 Թե յերգերս գուրս յեկան
 Անմիտ ու հիմար,
 Ձեզ եմ կրկին պարտական
 Հերքելու համար:

3.

Ասում են ինձ՝ թե իրավ,
 Ձուր եմ գրել Ձեզ,
 Քառյակներն իմ ջերմ ու լավ
 Սրտավառ ու կեզ,
 Յերգերս Ձեզ նվիրած
 Պատուտում եք Դուք,
 Ասում են ինձ՝ թե իրավ
 Ձար եք և անդուլթ:

ԶԿԱՍ ԳՈՒ, ԿԳԱՍ ԳՈՒ

Չկա՛ս գու,
 Կգաս գու,
 Իմ սրտից
 Պահա՛ս դու,
 Սուս ե վողջ,
 Անատողջ
 Մտքերից
 Անազգու:
 Իմ սրտում
 Մի ժպտուն
 Ծաղիկ եր
 Լուս փթթում.
 Լուս դնաց.
 Ո՛ւր դնաց,
 Ատեք ո՞վ
 Կիմանա:
 Իմ հոգում
 Մի սրկված
 Թերթիկ եր
 Լուս խոկում,
 Սրտիս հեզ,
 Ժպտերես

Ծաղիկն էր
Փնտուում նա,
Զկա՞ս դու,
Կգաս դու.
Ի՞մ սրտից
Պակա՞ս դու,
Սուտ է վողջ
Անտուողջ
Մաքերից
Անազգու:

ՎԵՐՋԻՆ ՎԵՐՋԱԿԵՏ

Վերջին հառաչով դնեցի յես այն
Յերկու ծաղիկը տխուր Ժպտացող,
Վորդես հրկիցվող հողու հանդրվան,
Վորից քո սրտում չկա վոչ մի շող:

Յե՛վ թաամեցին ծաղիկները մուգ,
Փակեցին հատ-հատ թերթիկները նաղ,
Գույներ ու բուրմունք կորան անշշուռ,
Վորդես աղջկա անավանդա յերազ:

Դաշկացան, կորան հույ ու հիշատակ,
Բերթիկներ փակող ծաղիկների հետ,
Յե՛վ ի՞մ անդրանիկ սիրավեպի տակ
Յերկու ծաղիկը յեղան վերջակետ:

Շատ դարուններ են լուռ անցել հերթով,
Շատ ծաղիկներ են թերթիկներ թափել,
Յե՛վ յերիտասարդ ամեն մի քերթող
Իր հույզի ծովն է ծաղիկով չափել:

Յե՛վ շատ դարուններ կանցնեն այն օրից,
Յերբ դու մոռացված յերազ կգառնաս.
Ա՛խ ուրիշ ծաղիկ ի՞մ հողում նորից
Կփակի դունեղ թերթիկները խաս:

Բայց ել չեն լինի հույզերն այն թեթևի,
Սիրաս չեն խոցի հայացքի նետեր,
Յեվ իմ կարոտի չափը կլինի
Սչան շաքարով թանձրացած գլինն:

Կխորհեմ խաղաղ ժպիտով ներող
Կնայեմ հողուս փոշոտ արխիվին,
Յեվ ծուլը, անտարբեր ընդհատումներով
Կհիշեմ կյանքիս հեքյաթները հին:

Թե վոնց դալկացան հույզ ու հիշատակ՝
Թերթիկներ թափող ծաղիկների հետ,
Թե վոնց անդրանիկ սիրափեպիս տակ,
Մուգ ծաղիկները յեղան վերջակետ:

Մ Ո Ր Ս

Թող իմ լայնասիրտ աշխարհը ների,
Վոր թողած կյանքի բերկրանքը բոլոր—
Թախիծ եմ պահել իմ սրտում ելի,
Ու վիշտն եմ յերգում հեռացած մի մոր:

Թող իմ լայնասիրտ աշխարհը ների,
Վոր թողած զվարթ աղմուկ ու հրդեհ,
Վոր թողած լույսը բոլոր արեվների,
Կանչում եմ նրան, ով չկա արդեն:

Թող իմ լայնասիրտ աշխարհը ների...

ՀԱԼՎԵՑ ՄՈՍԵ ՄԻ ԱՐՁԱՆ

Կար մոմածույլ մի արձան,
Վոր սիրտ ուներ հրկիզված.
Կար մի կորած արվարձան՝
Փողոցը նեղ, մայթը թաց,

Ուր մոմածույլ մի արձան
Վառել էր մի անհայտ ձեռք,
Ու հալում էր ինքնիրեն
Մենության մեջ անեղերք:

Յեկավ-յեկավ ջերմ դարուն.
Որերն այն սրազ հուշ դարձան.
Ավա՛ղ, այն ցուրտ աշխարհում,
Հալվեց մոմե մի արձան:

Պարզ ու անշուք իմ սեղանին
Կար մի նկար աղջկա.
Ծով թախիծով իր դեղանի
մայրս էր այն, վոր չկա.
Այդ հայացքի մշուշն անծիր
Տարածվել է իմ հոգում,
Ա՛խ տվեք մի սպեղանի
Կարոտ սրտին աղջկա:

Ամենայն գիշեր հեքյաթ յերազում
 Յերևում ե ինձ հողնատանջ մի կին,
 Նա լուռ ե հավերժ, յերբեք չի խոսում,
 Մթնած հայացքով փնտռում ե մեկին:

Խոսում եմ իր հեռ, միճում, աղմկում՝
 Վոր չեմ հասկանում յես կան ու չկան,
 Այլքան անտարբեր, ել ինչ մայր ես դու,
 Այցի չես դալիս կարոտ աղջկան:

Մտն ու սարսափած սեռեր մի կին,
 Արձանի նման անխոս, անհնչյուն,
 Անլուր տանջանքով փնտռում ե մեկին,
 Յես եմ այդ, յես եմ ե չի ճանաչում:

Ասում են իբր ինձ չի յել տեսել,
 Նրան շատ շուտով մեղանից տարան.
 Մնմտություն ե, վոր իբր յես ել
 Այսքան կարոտով փնտռում եմ նրան:

Ի՞մ յերազներն են նկարել իրեն,
 Յես ինքս եմ խոսում իր փակ շուքթերից.
 Նա մի ծաղիկ ե, մի տխուր սիրեն,—
 Կնոջ տեսք առած յերևում ե ինձ:

ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ՀԱՆԳՈՎ

ՔԱՌԱՏՈՂԵՐ ՍԻՐՈՒ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Յար դու բազերի մեջ ես,
 Գոհար շաղերի մեջ ես,
 Գարուն յերգող հավքի պես
 Վարդի թաղերի մեջ ես:

Լույս ու մութը խառը դեռ,
 Քար ու քարափ սառը գեռ.
 Դուրս եք թռչում խմբերով,
 Հավքը բնում թառը դեռ:

Ձեր ճաշը ս՞ուր բերեմ յես,
 Շարքաթ ու ջուր բերեմ յես.
 Մթնաղեմին թե մրսեք,
 Արտիցս հուր բերեմ յես:

Հունձքը անվերջ թող լինի,
 Լույս յերկրի մեջ թող լինի,
 Մեր սերն էլ սիրտ գրքում,
 Վտակի մի եջ թող լինի: ✓

Դեղին ցորեն դեղ կանենք,
Ամենքիս մեջ կես կանենք.
Թե մրդերն ել շուտ հասնեն
Մեր հանդեսը թեղ կանենք:

Յես ել վարդի քող շարեմ,
Ուրունքի տեղ ցող շարեմ.
Մեր շուտ հասնող կեսասից
Ականջի ալ ող շարեմ:

Յերբ հալաքենք բերքը մեր,
Իրար կտանք ձեռքը մեր,
Գեղ զեղովի միասին,
Կղրնդա յերզը մեր:

Յար դու բաղերի մեջ ես.
Վարդի թաղերի մեջ ես,
Արեահամ մրդի պես,
Կոհար շաղերի մեջ ես:

ԱՂՋԻ, ՀԵՁ ԱՂՋԻ

Մղջի՛, հեղ աղջի՛...
Միրոս քեղ աղջի՛.—
Ինչ կա նրա մեջ
Բացիր տես աղջի՛...:

Աղջի՛ լուս աղջի՛.—
Տեսքով հուր աղջի՛...
Ձահելի ուր է
Ձեռքդ տուր աղջի՛...:

Հերիք չուրսա
Դե յեղնենք վտարի.
Թեպեքս կանեմ
Քեղ արվան դտարի:

Յերգով ու սարով
Կաղմենք մի շրջան,
Մենք շուրջ շղթա,
Դու մեջը մարջան:

Գարունը չող ե բերել,
Վոսկեթել քող ե բերել,
Սրտում ծաղկող թփերին
Յուցուլուն ցող ե բերել:

Աղջիկ եմ պարզ ու բարի,—
Չունեմ դարդեր, դինդ ու քար,
Սրտում այս լեն աշխարհի
Սեր եմ հյուսում ծաղկատառ:

Կսկանը վարդ ե յեղել,
Տերեվը հարթ ե յեղել,
Զգիտեյի վոր սերս
Շատ խորն ու բարդ ե յեղել:

Գարունը չող ե բերել,
Վոսկեթել քող ե բերել
Սրտում ծաղկող թփերին
Յուցուլուն ցող ե բերել:

Խ Ա Ռ Ն Յ Ե Ր Գ Ե Ր

ՀՈՒՇԵՐ

Հասող դինի, խոսող նվազ,
Հարբած մարդիկ ու բաց մարդիկ.
Որորվում են փողոց (ու բակ
Որորվում ե տխուր բարդին:

Լացող սրինդ, հողնած ու հեղ.
Որորվում են փողոց ու բակ.
Քամու բերնում ամենուրեք
Ծվեն-ծվեն յերդ ու նվազ:

Մի անհող մարդ, անամօք մարդ,
Մաքառում ե վշտերի հետ.
Յերակներում արյունաքամ
Հասող դինու վարար մի դետ:

Մի հին այբում մաքերիս մեջ,
Մի կտրտված կինո նկար.
Լսում եմ յես ազմուկ անվերջ,
Հառաչանքներ թույլ ու տկար:

Խենթ խնդության սրայծառ ժամին
Ծիծաղների ծալքի միջից,
Նվում և դեռ անցյալըն իմ,
Վորպես հանդչող տխուր մի ճիչ:

Հոսող զինի, խոսող նվազ,
Հարբած մարդիկ ու բաց մարդիկ.
Որտեղում են վտոց ու բակ,
Որտեղում և տխուր բարդին:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻՆ

Դու իմ հարազատ յեղբայրն ես յեղեկ
Ինձնից շատ առաջ ապրեկ ես, մեռեկ.
Քեզ ուրիշ մայր և լույս աշխարհ բերեկ,
Բայց իմ հարազատ յեղբայրն ես յեղեկ:

Յեկ քո տխրության յերանդը լուսե
Հուզուս մեջ կաթ-կաթ կարոտ և հեղեկ,
Դու սրաի թրթիւ, դու մորմոք ու սեր
Դու իմ հարազատ յեղբայրն ես յեղեկ:

(Հովհաննես Թումանյանի հիշատակին)

«Քե՛ք անողին քե՛ք չի պակսի»

Քե՛ք է մեր վողջ աշխարհում,

Յրեք անվերջ շուշան, հասմիկ

Ծաղիկն առատ այս դարուն

Վարդի բաժակ

Նուրբ մանուշակ,

Ծաղիկն առատ այս դարուն

Քե՛ք է անվերջ

Հանդեսը պերճ

Մեր լուսաչող աշխարհում:

Գինի լցրեք, անուշ գինի

Փրփուր թափեք հորդ ու զեխ

Թող հուր լինի, շող հուր լինի,

Ուռենու տակ վարսաղեղ.

Ծափ ու ծիծաղ

Յերգեր ու տաղ

Ուռենու տակ վարսաղեղ

Մեծ պոետին

Կանչենք պիտի

Հանդեսներին մեր շքեղ:

Ու՞ր էս լսիր, ջո՞ւր էս, լսիր,

Ի՞նչ էս հիմա, անուշ մարդ,

Աղմկո՞ւմ էս, լո՞ւռ էս, լսիր,

Հովիտներում ծաղկազարդ,

Հող էս, ցող էս

Լույսի շող էս

Հովիտներում ծաղկազարդ,

Կամ հազվազյուտ

Ծաղիկի մի հյուսի՛

Քեղ է կանչում յերգս արդ:

Անուշք քո յերգի փերին

Զրնգում է անդադար.

Ախ թե մի որ մեր քե՛քերին

Դու լինե՛լիք թամաղա,

Յերգի փերին

Մեր քե՛քերին

Ախ թե լինե՛ր թամաղա,

Մարդ չեր մնա

Ով իմանար

Քե՛քի կզար հալատա:

Յերգում են վողջ մայր ու մանուկ

Քո անհասնում փառքը մեծ,

Աշխատողի ձեռքում բանուկ

Քո ջահերի փառքը մեծ

Մաքի արև,

Սրտի տերև

Ծով խալարից դուրս յեկած,

Քեղ է կանչում

Չախով հնչյուն

Ջահեղների շարքը մեծ:

Այս ծաղիկները քամին և բերել,
Մի սիրուն վոստիկ, մի քանի տերև
Վոր հալածել և անտառում կանաչ
Ըն գլխ առջակի կարկաչին ճանաչ,
Վոր փափսում են բազմանուն սերբը
Այս ծաղիկները, այս ծաղիկները,
Այս ծաղիկները, քամին և բերել:

Իմ տաք աշխարհի յերգասեր հովը
Սիրուն սուսան և սրտիս մեջ սերել,
Գուցե հարցնեք ինչպես կամ ով և
Իմ հողուն այգուկս դգվել ու պերել,
Սրտիս փաթաթել յերգերի թևեր,
Գուցե հարցնեք ինչպես կամ ով և...
Գուցե հարցնեք ինչպես կամ ով և...

Յերանգ առ յերանգ, փնջիկ առ փնջիկ,
Համետ ու խոհուն, լուխ ու մնջիկ.
Փարված-փաթաթված հաղար ծիլերով
Իմ կանաչ յերկրի արևոտ լանջին,
Վոր փափսում են հաղար մի սերբը
Այս ծաղիկները, այս ծաղիկները,
Այս ծաղիկները քամին և բերել:

Ճերմակ ծերունու նիրհով իմաստուն
Հողնած աշխարհը խորհում և խաղաղ,
Չկա անհանգիստ խինդ ու աղաղակ,
Քնած և կյանքը անհունի սրտում,—
Ճերմակ ծերունու նիրհով իմաստուն:

Սպիտակել են վարսերն անտառի,
Միրահար սյուքը սարսափից փախավ.
Ճնճողուկն և միայն թեպիքը կախած
Մամբում սիրտը ալեհեր ծառի
Սպիտակել են վարսերն անտառի:

Արփին մշուշը ճեղքում և կամաց,
Արթնանում և խուլ բնության վորդին.
Այն իմ դյուզն և ծեր սիրտը միզամած
Ներս հրավիրում մրսած ճամբորդին,—
Արփին մշուշը ճեղքում և կամաց:

Ասես յես քնկոտ մանուկ եմ նորից.
Հրաչքներն են դես հողուս հետ խաղում,
Յերբ ծվեն-ծվեն մառախուղներից,
Խոնավ խրճիթն և խաղաղ ծիծաղում,—
Ասես յես քնկոտ մանուկ եմ նորից:

Թաց մեխակի թերթին նստած,
 Թիթեռ քույրիկ, խոսիր ինձ հետ:
 Ասա՝ տեսնեմ ամուր, հաստատ
 Հենարանն այդ վո՞նց ես դեի:

«Յերբ կանաչ ե, յերբ դարուն ե,
 Յերբ ժպտում ե աշխարհն արար
 Իմ խոր քունն ել, իմ նոր տունն ել,
 Լինում ե թաց թերթի վրա»:

«Յերբ արեւ ջերմ ու ջինջ ե,
 Ջերմ սրտերն են զրկում իրար,
 Իմ հանգիստն ել, քաղցր նինջն ել
 Լինում ե թաց թերթի վրա»:

Ո՞վ եր արդյոք քեզ ջրում
 Իմ նազ, իմ նուրբ մանուշակ,
 Այդ ստոցապատ խիճերում,
 Այդ քարերում անմշակ.
 Վորքի նման հազածված,
 Գլուխը կախ, աչքը թաց,
 Սև խիճերում անմշակ
 Իմ նազ, իմ նուրբ, մանուշակ:
 Ստոցե սար ես ձեղքել դու,
 Թարթիչներով մթնաթույր
 Լեռ ու քար ես հղկել դու,
 Հարթիչներով այդքան թույլ
 Ասա փոքրիկ իմ խիղախ
 Ինչպես, ինչով հաղթեցիր,
 Վոր քարերի սրտին պաղ,
 Արձակեցիր ճյուղք ու ծիլ:
 Անուշ բույր ես բերել մեզ,
 Թաց համբույր ես բերել մեզ,
 Սև խիճերում անմշակ
 Իմ նազ, իմ նուրբ մանուշակ:
 Այդպես վո՞ղջը կեղնեն վեր


Թե արևին կարոտեն :
 Գարնան դաշտ ու արոտեն
 Այդպես վողջը կեննեն վեր .
 Մի ճնձաղիկ անհամբեր ,
 Յերկու տերև խշխշան ,
 Յերեքնուկներ դանդրահեր .
 Ճերմակ շորով մի շուշան ,
 Կխորտակեն քար ու լեռ
 Կտարածեն ճյուղք ու ծիլ
 Ծիծաղելով կեննեն վեր
 Իմ աշխարհում լուսածիր :
 Այ ձեզ վողջույն , ձեզ բարև ,
 Ձեզ ջերմ ու ջինջ բորբ արև ,
 Ձեր գենքերին հակինթե ,
 Ձեր վաշտերին վոսկեթել
 Մի ճնձաղիկ անհամբեր ,
 Յերկու տերև խշխշան ,
 Յերեքնուկներ դանդրահեր ,
 Ճերմակ շորով մի շուշան ,
 Յեվ խիճերում անմշակ
 Իմ նաղ , իմ նուրբ , մանուշակ :



Ձ. ակնիչ 1/11145

Պատ. խմբագիր՝
 Հ. Գ. Ի. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ.
 Տեխ. խմբագիր՝
 Ս. Ա. Թ. Թ. Թ. Թ. Թ. Թ.
 Սրբագրիչ՝
 Ա. Ա. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ.
 Կոնտրոլ սրբագրիչ՝
 Ծ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ.

Գրավիտի լիպոն՝ Բ-1055 Հրատ. 4955.
 Պատվեր 617. Տիրաժ 2500. Թուղթ 62X84.
 Տպագր. 4 մամ. մեկ մամ. 256000 նշան.
 Հանձնված և արտադրության 7 ուղևոր.
 1939 թ. Ստորագրված և տպագրության
 համար 20 հունվարի 1940 թ.
 Հայկական Կոմ. Յերևան, Լենինի, 65



230 16

7

« Ազգային գրադարան



NL0358149

42662